

Օր մը Weissին կը դրկուի ջրհորի քար մը խանգարուած արձանագրութեամբ խնդրելով որ կարդայ: Հոչչակաւոր հնախօսը կը սկսի թելազգուիլ այն պարագայէն որ այս քարին զսնուած տեղը շատ հռովմէական ջրհորներ կան, կեղտաց ժամանակի արշաւանքներէն մացած: Այս ուղղութեամբ կը սկսի ուսումնասիրել և երկար քննութիւններէ վերջ կը լուծէ այսպէս.

Res. . . . . publica (հասարակապետութիւնը)  
er . . . . . igere (կանգնել)  
vo . . . . . lait (ափց)  
ir . . . . . rigandum (ոռոգելու համար)

Այս լուծումը դրկելէն քիչ օրեր վերջ, անուանի հնախօսը տոմսակ մը կ'ընդունի, որով կը հաղորդուէր իրեն թէ մեկնութիւնը սիմալած է, որովհետեւ թաղապետութեան և աշտոնեայն J. B. Tourneau վստահ է որ այդ քարին վրայ ինքը գրած է պարզապէս Reservoir (յամբար):

Ուրիշ հնախօսի մ'ալ հետեւեալ արձանագրութիւնը կը տրուի մեկնելու համար.

I. C. I. . . . .	E. . . . .	S.
T. L. . . . .	E. C. H. . . . .	E.
M. . . . .	I. N. . . . .	D. E.
S. A. . . . .	N. E. . . . .	S.

Հմուտ թրօֆէսէօրը սկսաւ այս գիրերուն մէջ գտնել կայսրներու (Imperator), հրապատուներու (Consul) անուններու սկզբնատառեր, մինչև որ օր մը մարդուն մէկն ընթացիկ կերպով կարդալով իմացաւ որ կ'ըսէր պարզապէս. Ici est le chemin des ânes.

Ի՞նչպէս է:

Ասոնց հետ յիշենք նաև այն հոչչակաւոր անօթին դէպըր որ շատ հնութեան երեսոյթ ունէր և որուն վրայ զրոշմուած էին M. J. D. D. գիրերը, որոնց գիտնական մը մեկնեց Magno Jovi Deorum Deo (Մեծին Արամազդայ Աստուածոց Աստուածին նորուած): Բայց յանկարծ իմացուցաւոր շատ պարզ կերպով զրուած էր թէ այդ անօթը կը պարունակէ Moultarde Jaune De Dijon.

Ծարայարելի

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Հ. Գ. Վ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ. — Ուսումնասիրութիւն Ո. Մեսրովքայ գարուց և հայկական գրոց գիտին . . . . .	1-8
Հ. ՎԻՆ ԱԹԵԱՆ. — Ազգային եկեղեցական բանաստեղծութեան պատմական զարգացումը . . . . .	8-13

### ՊԱՏՄԱԿԱՆ

Հ. Ե. Վ. ՏԱԹԵՅՏ. — Խորայէլ Օրի ծը դարու հայ ազգին ազատագրութեան ուահիրան . . . . .	27-32
--	-------

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՈՒԽԵՐԵԹՈ ՖՐԱԳԻՆ. — Խտալացի մը չայաստանի մէջ. թրգմ. Հ. Ղ. Արապիոնեան . . . . .	34-39
---	-------

### ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

Հ. Յ. ԱՐԵԿԵՐ. — Սփինքսներու գաղտնիքը . . . . .	39-41
--	-------

### ԳՐԱԿԱՆ

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ. — Գրական Պատմութիւն. — Աւրուագիծ (1850-1910). 13-26
--

### ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

Հ. Գ. ԱՅԵՆԵԱՆ. — Ի մահ ամի հոյոյ և ի ծնունդ ամանորոյ . . . . .	32-33
— Օստրութեան մէջ մեռած երիտասարդ հասակին . . . . .	33-34
— Տապահազիր . . . . .	34

### ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Հ. Կ. ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ. — Լիւոն Լեոնի «Իմ էսքիզերից» . . . . .	46-47
--	-------

### ԱԶԳԱՆԱՐԿԱՆՔ

— Տաղանդաւոր Հայ մը որ 100 հազար տոլար կը վաստիկ իր ըրած գիտովք. — Երթէզահայերը. — Հայ բանախօսը Հոօմոնմ. — Կոյր հայ բժիշկը. — † Հարրի Ֆլիս Բլու Լին. — Լինչի հայազգի մայրը. — † Բրոֆ. Միւլիք. — Մեռելներուն ետևէն. Տ. Աննա Միւլիք. — Քոսթիքա Պըլըզուու. — Մահ հայասէր Ֆրանսիս Տը Բրէսանսէր. — 200,000 ֆրանսիր նպաստը. — Մ. Փորթուգալեանի յորելեանը . . . . .	41-46
--	-------

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

— Գիտնականաց միամտութիւնը . . . . .	47-48
-------------------------------------	-------